

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019 թվականի մայիսի 17 -ին ժամը 12-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնքում , համայնքապետարանի շենքում կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և հողամասերի աճուրդ վաճառք: Աճուրդ վաճառքի է ներկայացվում փոքր քանակավայրերի կատեգորիայի 46.64քմ մակերեսով կաթսայատունն իր պատվանդանով և 0,01198հա հողամասը ,ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության 0,11746հա հողամասը հետևյալ կողերով , լոտերով և մեկնարկային գներով.

Լոտ 1. 46.64քմ մակերեսով կաթսայատունն իր պատվանդանով ծածկագիր 03-060-0004-0017-001,03-060-0004-0017-002 և 0,001198 հա հողամասը ծածկագիր 03-060-0004-0017 մեկնարկային գինը 239282 դրամ: Շինությունը կառուցվել է 1969թվականին, ունի հիմնանորոգման կարիք: Գտնվում է գյուղի կենտրոնում, համայնքապետարանի հարևանությամբ, ունի բնական գազի, խմելու ջրի և էլեկտրական հոսանքի միացման հնարավորություն:

Աճուրդ վաճառքի մեկնարկային գնի հավելման նվազագույն չափ սահմանել 12000 /տասներկու հազար/ դրամ:

Լոտ 2. 0.11746հա III կարգի գյուղատնտեսական նշանակության հողամասը ծածկագիր 03-060-0301-0008 մեկնարկային գինը 337932 դրամ: Գտնվում է փոքր քանակավայրի հարևանությամբ, ապահովված է սեզոնային ոռոգման ջրով: Հողամասի վրա հիմնված է պտղի /դեղձենի/ նորատունկ այգի:

Աճուրդ վաճառքի մեկնարկային գնի հավելման նվազագույն չափ սահմանել 17000 /տասնյոթ հազար/ դրամ:

Գույքի և հողի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հայտերը ընդունվում են մինչև մայիսի 13-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Մրգանուշի համայնքապետարան աճուրդային հանձնաժողովին:

Հեռախոսներ՝ (093) 66 -06 -02 , (098) 93 -13 -37

